Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-439-10.01.2020,13.04.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում, անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն մասում նշված դեպքերի:

Կենսաթոշակառուի դիմումի հիման վրա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ է կամ լրացել է կենսաթոշակառուի 75 տարին:

Կենսաթոշակը լիազորագրով կամ 14 տարին լրացած անչափահասին վճարվում է կանխիկ եղանակով:»:

2. 4-րդ մասը «փոխանցելն է» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի հաշվարկային հաշվին փոխանցելն է» բառերով.

3. 6-րդ մասի 1-ին պարբերությունում «վերջին անգամ բանկ» բառերից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը, իսկ «ներկայանալ բանկ» բառերից հետո լրացնել «(եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ Ազգային օպերատորին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է Ազգային օպերատորի միջոցով)» բառերը.

4. 6-րդ մասի 2-րդ պարբերությունում «բանկի» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորի» բառերը, իսկ «բանկ» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը,

5. 9-րդ մասը «Կենսաթոշակը» բառից հետո լրացնել «կանխիկ եղանակով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 36-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 3-րդ պարբերությունում «վճարվում է» բառերից հետո լրացնել «անկանխիկ եղանակով,» բառերով, իսկ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը մահացածի 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային վճարվում է կանխիկ եղանակով:»,

2. 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նախկին կենսաթոշակառուի կամ այդ գումարը օրենքով ստանալու իրավունքն ունեցող այլ անձի դիմումի հիման վրա, անկանխիկ եղանակով (բացառությամբ այն դեպքի, երբ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային):»:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «եւ նրան» բառերը փոխարինել «առանձնահատկությունները եւ» բառերով:

Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «(բանկ չներկայանալու)» բառերը փոխարինել «(բանկ կամ Ազգային օպերատորին չներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից չհաստատվելու)» բառերով, իսկ 4-րդ մասի 3-րդ կետում «(բանկ ներկայանալու)» բառերը փոխարինել «(բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից կողմից հաստատվելու)» բառերով, «բանկից» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորից» բառերով:

Հոդված 5. Օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «կամ կանխիկ» բառերը եւ «Սույն պարբերությամբ սահմանված ժամկետում թաղման նպաստը չվճարելու դեպքում չվճարված թաղման նպաստի գումար վճարվում է, եթե

դիմումատուն կրկին դիմել է թաղման նպաստը նշանակելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում:» նախադասությունը:

Հոդված 6. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ մասերով.

«9. Կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա, եթե կենսաթոշակը նշանակվել է.

1) Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում՝ մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը,

2) այլ քաղաքներում (բացառությամբ՝ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ մինչեւ 2021 թվականի հուլիսի 1-ը,

3) 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2022 թվականի հուլիսի 1-ը,

4) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը:

10. Գյուղերի ցանկը՝ ըստ բնակչության քանակի, հաստատում է Կառավարությունը:

11. Եթե սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներից հետո ներկայացվում է կենսաթոշակ վճարելը վերսկսելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու դիմում, ապա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով, հաշվի առնելով սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով եւ սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառությունները:

12. Մինչեւ սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետները նշանակված կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվում է մինչեւ դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա կենսաթոշակի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի կամ Ազգային օպերատորի միջոցով.

1) Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում՝ 2021 թվականի հուլիսի 1-ից,

2) այլ քաղաքներում (բացառությամբ՝ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ 2022 թվականի հունվարի 1-ից,

3) 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի 1-ից,

4) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, որն ուժի

մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից: Օրենքի 55-րդ հոդվածի 10-րդ մասում նշված ցանկը հաստատելու մասին և 12-րդ մասում նշված՝ բանկը կամ Ազգային օպերատորին ընտրելու կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-439-10.01.2020,13.04.2020-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում, անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն մասում նշված դեպքերի:

Կենսաթոշակառուի դիմումի հիման վրա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ է կամ լրացել է կենսաթոշակառուի 75 տարին:

Կենսաթոշակը լիազորագրով կամ 14 տարին լրացած անչափահասին վճարվում է կանխիկ եղանակով:»:

2. 4-րդ մասը «փոխանցելն է» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի հաշվարկային հաշվին փոխանցելն է» բառերով.

3. 6-րդ մասի 1-ին պարբերությունում «վերջին անգամ բանկ» բառերից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը, իսկ «ներկայանալ բանկ» բառերից հետո լրացնել «(եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ Ազգային օպերատորին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է Ազգային օպերատորի միջոցով)» բառերը.

4. 6-րդ մասի 2-րդ պարբերությունում «բանկի» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորի» բառերը, իսկ «բանկ» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը,

5. 9-րդ մասը «Կենսաթոշակը» բառից հետո լրացնել «կանխիկ եղանակով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 36-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 3-րդ պարբերությունում «վճարվում է» բառերից հետո լրացնել «անկանխիկ եղանակով,» բառերով, իսկ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը մահացածի 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային վճարվում է կանխիկ եղանակով:»,

2. 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նախկին կենսաթոշակառուի կամ այդ գումարը օրենքով ստանալու իրավունքն ունեցող այլ անձի դիմումի հիման վրա, անկանխիկ եղանակով (բացառությամբ այն դեպքի, երբ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային):»:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «եւ նրան» բառերը փոխարինել «առանձնահատկությունները եւ» բառերով:

Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «(բանկ չներկայանալու)» բառերը փոխարինել «(բանկ կամ Ազգային օպերատորին չներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից չհաստատվելու)» ~~ից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից չհաստատվելու»~~ բառերով, իսկ 4-րդ մասի 3-րդ կետում «(բանկ ներկայանալու)» բառերը փոխարինել «(բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից կողմից հաստատվելու)~~ից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից հաստատվելու~~» բառերով, «բանկից» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորից» բառերով:

Հոդված 5. Օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «կամ կանխիկ» բառերը եւ «Սույն պարբերությամբ սահմանված ժամկետում թաղման նպաստը չվճարելու դեպքում չվճարված թաղման նպաստի գումար վճարվում է, եթե դիմումատուն կրկին դիմել է թաղման նպաստը նշանակելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում:» նախադասությունը:

Հոդված 6. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ մասերով.

«9. Կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա, եթե կենսաթոշակը նշանակվել է.

1) Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում՝ մինչեւ 2021 թվականի հունվարի~~2020 թվականի հուլիսի~~ 1-ը,

2) այլ քաղաքներում (բացառությամբ՝ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ մինչեւ 2021 թվականի հուլիսի~~հունվարի~~ 1-ը,

3) 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2022 թվականի հուլիսի ~~հունվարի~~ 1-ը,

4) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում մինչեւ 2023 թվականի հուլիսի~~հունվարի~~ 1-ը:

10. Գյուղերի ցանկը՝ ըստ բնակչության քանակի, հաստատում է Կառավարությունը~~՝ մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը~~:

11. Եթե սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներից հետո ներկայացվում է կենսաթոշակ վճարելը վերսկսելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու դիմում, ապա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով, հաշվի առնելով սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով եւ սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառությունները:

12. Մինչեւ սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետները նշանակված կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվում է մինչեւ դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա կենսաթոշակի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի կամ Ազգային օպերատորի միջոցով.

1) Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում՝ 2021 թվականի հուլիսի ~~հունվարի~~ 1-ից,

2) այլ քաղաքներում (բացառությամբ՝ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ 2022 թվականի հունվարի ~~2021 թվականի հուլիսի~~ 1-ից,

3) 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի~~2022 թվականի հուլիսի~~ 1-ից,

4) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում մինչեւ 2024 թվականի հունվարի ~~2023 թվականի հուլիսի~~ 1-ից:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից: Օրենքի 55-րդ հոդվածի 10-րդ մասում նշված ցանկը հաստատելու մասին և 12-րդ մասում նշված՝ բանկը կամ Ազգային օպերատորին ընտրելու կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Отф
Uni

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-439-10.01.2020,13.04.2020-ԱՍ-011/1*), ««ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-439[1]-10.01.2020,13.04.2020-ԱՍ-011/1)* ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-439[2]-10.01.2020-ԱՍ-011/1*) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերում համապատասխան լրացումներ կատարելու վերաբերյալ դրույթներով: Ըստ այդմ, առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով. «2. 4-րդ մասը «փոխանցելն է» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ վճարային ծառայությունների միջոցով կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի հաշվարկային հաշվին փոխանցելն է» բառերով. 3. 6-րդ մասի 1-ին պարբերությունում «վերջին անգամ բանկ» բառերից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը, իսկ «ներկայանալ բանկ» բառերից հետո լրացնել «(եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ Ազգային օպերատորին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է Ազգային օպերատորի միջոցով)» բառերը. 4. 6-րդ մասի 2-րդ պարբերությունում «բանկի» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորի» բառերը, իսկ «բանկ» բառից հետո լրացնել «կամ Ազգային օպերատորին» բառերը.»: Առաջարկության նպատակն է՝ հնարավորություն տալ փոստային կապի ազգային օպերատորին իրականացնել կենսաթոշակների անկանխիկ վճարում՝ կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ընդ որում, առաջարկվում է սահմանել, որ առաջարկվող 4-րդ մասն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասն առաջին պարբերությունից հետո նոր պարբերությամբ լրացնելու մասին 2020 թվականի մարտի 19-ի ՀՕ-109-Ն օրենքն ուժի մեջ մտնում հունիսի 25-ին:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:

2.	Կառավարություն	««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված.	Հաշվի առնելով Օրենքի 35-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները (այն հանգամանքը, որ կենսաթոշակի անկանխիկ վճարման փոստային կապի ազգային օպերատորին)՝ Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում համապատասխան փոփոխություններ նախատեսող դրույթներով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 9-րդ և 12-րդ մասեր	Հաշվի առնելով առկա իրողությունները՝ նախագծի 6-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 55-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով նախատեսված ժամկետները հետաձգել 6 ամսով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 10-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 55-րդ հոդվածի 10-րդ մասում «՝ մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը» բառերը հանել՝ ըստ բնակչության քանակի Գյուղերի ցանկը Կառավարության կողմից հաստատելու համար վեցամսյա ժամկետ սահմանելով Նախագծի 7-րդ հոդվածով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսել Օրենքի 55-րդ հոդվածի 10-րդ մասում նշված՝ ըստ բնակչության քանակի Գյուղերի ցանկը հաստատելու և 12-րդ մասում նշված՝ կենսաթոշակի վճարումը անկանխիկ եղանակով շարունակելու համար բանկը կամ Ազգային օպերատորին ընտրելու կարգը Կառավարության կողմից սահմանելու վեցամսյա ժամկետ:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը.	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «2. 9-րդ մասը «փոխանցելն է» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով նպաստի գումարը ծնողի հաշվարկային հաշվին փոխանցելն է» բառերով.»: Առաջարկության նպատակն է՝ հնարավորություն տալ փոստային կապի ազգային օպերատորին իրականացնել նպաստի անկանխիկ վճարում:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 9-րդ և 12-րդ մասեր	Հաշվի առնելով առկա իրողությունները, Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 39-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով նախատեսված ժամկետները հետաձգել 6 ամսով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 10-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 39-րդ հոդվածի 10-րդ մասում «՝ մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը» բառերը հանել՝ ըստ բնակչության քանակի Գյուղերի ցանկը Կառավարության կողմից հաստատելու համար վեցամսյա ժամկետ սահմանելով Նախագծի 4-րդ հոդվածով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:

9.	Կառավարություն	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 12-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 39-րդ հոդվածի 12-րդ մասի նախաբանում «կենսաթոշակի» բառը փոխարինել «նպաստի» բառով:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
10	Կառավարություն	««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսել Օրենքի 39-րդ հոդվածի 10-րդ մասում նշված՝ ըստ բնակչության քանակի Գյուղերի ցանկը հաստատելու և 12-րդ մասում նշված՝ նպաստի վճարումը անկանխիկ եղանակով շարունակելու համար բանկը կամ Ազգային օպերատորին ընտրելու կարգը Կառավարության կողմից սահմանելու վեցամսյա ժամկետ:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդվածով. «**Հոդված 3** Հաճախորդի (հաշվի տիրոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից հաստատելու կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է: